ԵՎԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՕՏԱՐԱԶԳԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԿԵՐՊԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Օտար տերությունների խաչմերուկում ծվարած Հայաստանը դարեր շարունակ եղել է դիվանագիտական հետաքրքրությունների և նվաճողական քաղաքականության առարկա: Հին շրջանում, մասնավորապես 4-5-րդ դարերում, երբ Հայոց աշխարհը քրիստոնեությունն ընդունել էր որպես պետական կրոն, և Արշակունիները փորձում էին կայունացնել երկրի ներքին և արտաքին քաղաքական կյանքը, օտար տերությունները բոլոր հնարավոր միջոցներով (ուծացում, տնտեսական ճնշում, ամուսնական դիվանագիտություն և այլն) փորձում էին իրենց ենթարկել հայոց փոքր, բայց կարևոր նշանակություն ունեցող երկիրը՝ ուղղակի կամ անուղղակի ձևով առնչվելով մեր աշխարհին, նրա ճակատագրին: Հայոց թագավորներից շատերի վարքագիծն ու գործողություններն անգամ հաճախ պայմանավորված են եղել օտարազգի տերությունների կամքից ու ցանկությունից : Այդ է պատճառն, որ հինգերորդ դարի մատենագրության մեջ հայ պատմիչները անդրադարձել են այլազգի թագավորներին՝ բազմաթիվ հերոսների կողքին կերտելով նաև նրանց կերպարները:

Այլազգի թագավորներին ուսումնասիրելիս նկատում ենք մոտեցման մի քանի սկզբունքներ, որոնք ընդհանուր են բոլոր պատմիչների համար: Նախ՝ օտար արքաները կերտվում ու գնահատվում են հայոց աշխարհի նկատմամբ տածած իրենց վերաբերմունքի, փոխհարաբերության, կատարած գործերի հիման վրա: Երկրորդ՝ նրանց գնահատման չափանիշը դառնում է կրոնը. որքանով է տվյալ արքան ընդունում քրիստոնեությունը և ինչպես է վերաբերվում դրան : Երրորդ, որը բխում է երկրորդից, բոլոր այն թագավորները (անկախ ազգությունից), որոնք չեն հավատում Քրիստոսին ու համառորեն պայքարում, պատերազմում են

քրիստոնեության դեմ. կերպավորման տարբեր սկզբունքներով կերտվում են որպես խիստ բացասական հերոսներ անմարդկային գծերով : Երրորդից բխում է նաև չորրորդ օրինաչափությունը. պատմագիրների կերտած գրեթե բոլոր պարսիկ թագավորներն ու զորավարները (մասնակի բացառություններով) հիմնականում բացասական կերպարներ են. որը պայմանավորված է նախ և առաջ նրանց կրակապաշտ հեթանոս լինելով:

Այլազգի թագավորները բավականին շատ են, սակայն մենք կանդրադառնանք միայն մի քանիսին, որոնց անունները մինչ օրս էլ հիշատակվում են հայոց պատմության այս կամ այն հիշարժան էջը թերթելիս:

Հինգերորդ դարի մատենագրության մեջ ամենաշատ հիշատակվող անուններից է պարսից թագավոր Շապուհը: Նա այն անհատներից էր, որը մեծ նշանակություն էր տալիս Հայաստանի հետ բարեկամական հարաբերություններ հաստատելուն ու ջանքեր չէր խնայում այդ բարեկամությունը պահպանելու համար: Բուզանդի Պատմության մեջ հենց սկզբում Շապուհը հանդես է գալիս մի մարդ, որը մեծ փառքով ու պատվով է հյուրընկալում Արշակ Երկրորդին, իր եղբոր, որդու պես փայփայում նրան և արժանացնում մեծագույն ուշադրության. « ... և ի միասին ի միում տաղտի գահուն ի ժամ ուրախութեանն բազմէին, զմիագոյն զմիանշան զհամահանդերձ զարդու: Եւ զմիօրինակ զթագն օր ըստ օրէ ինքեան եւ նմա թագաւորն Պարսից զարդ պատրաստէր. զոյգ երկոքին ի միասին որպէս զեղբարս հարազատս անբաժինս եղփացեալք էին ի միում ուրախութեան, եւ յանպատում ուրախութեան ուրախ լինէին »[1]:

Իհարկե, Շապուհի քայլերը թելադրվում էին քաղաքական շահերից: Հայաստանը, գտնվելով երկու հզոր պետությունների արանքում, կարող էր կշեռքի նժարը տատանել դեպի այն կողմ, որին կհարեր ինքը: Սա լավ հասկանում էին մեծ պետությունների արքաները, սակայն Շապուհը ոչ միայն հասկանում, այլև գործում էր: Բազմաթիվ նվերներով, հոգատար ու ջերմ վերաբերմունքով, մեծարումով և ուշադրությամբ շրջապատելով Արշակին

---

[1] Փավստոս Բուզանդ. Հայոց պատմություն, 1987, էջ 194:

պարսից արքան ձգտում է իրապես բարեկամանալ հայոց թագավորի հետ: Բոլոր դեպքերում Բուզանդի կերտած Շապուհը այդպիսին է: Որպեսզի հաստատուն ու անխախտ մնա իրենց դաշինքը, արյաց արքան Արշակին ստիպում է երդվել Սուրբ Ավետարանի վրա, իսկ դա նշանակում է, որ պարսիկը, արևապաշտ լինելով հանդերձ, ներքին հարգանք ունի քրիստոնեական կրոնի հանդեպ: Շապուհի հետաքրքրությունը հայերի նկատմամբ ոչ միայն զուտ քաղաքական շահ է, այլ նաև յուրօրինակ ակնածանք: Պարսիկ արքան բարձր է գնահատում հայերի արժանիքները, նրանց տիրասիրությունը, նվիրվածությունը, մեծահոգությունը, քաջասրտությունը, ուստի նա ձգտում է հայի մեջ գտնել իր համար մշտական դաշնակից ու անբաժան ընկեր: Օտարազգի այս թագավորը երախտագիտության խոր զգացում ունեցող մարդ է, որն իրենց մատուցած ծառայությունների դիմաց յուրաքանչյուրի կատարած գործը գնահատում է ըստ արժանվույն, առատորեն պարգևատրում բոլորին: Հույների դեմ հայերի տարած բացառիկ հաղթանակը զարմանքով ու հրճվանքով է ընդունում Շապուհը: Այստեղ իր իշխանների հետ խորհրդակցելիս նա դրսևորվում է որպես ուրույն հոգեբանություն ունեցող մի մարդ: Նա հրաժարվում է Արշակին, իր մատուցած ծառայությունների դիմաց, արծաթ ու ոսկի կերպասներ տալ, ասելով՝ «Արդ ոչ եթէ սէր ինչ է, զոր դուքդ ասացէք, այլ եկայք, անքակ սէր արասցուք մեք ընդ Արշակայ արքային Հայոց, զի մինչև յաւիտեան անբաժին լիցի նա ի մէնջ: Տացեմ զդուստր իմ կնութիւն Արշակայ արքայի Հայոց, և տաց նմա տուն մեծ, զի յորժամ գնացէ ի Հայոց գալ առ մեզ, այնպէս տացուք նման տուն, զի ի Հայոց մինչև ի Տիզբոն մինչև առ մեզ համակ յիւրում տան ագցի, մինչև առ մեզ եկեսցէ»[2]:

Շապուհի այս մտքերը ցույց են տալիս, որ նա անկեղծորեն է վերաբերվում Արշակին, բարձր է գնահատում հայոց զինվորներին, հստակ տարորոշում է հոգեկան ու նյութական արժեքները: Երախտագիտության դրսևորման մեկ այլ վառ օրինակ է Դրաստամատ – Շապուհ երկխոսությունը-

---

[2] Նույն տեղում, էջ 208:

փոխհարաբերությունը, որտեղ վերջինս, ի նշան երախտիքի, թույլատրում է Դրաստամատին այցելել իր գերյալ տիրոջը՝ Արշակին:

Հետագա ծավալած գործունեության ընթացքում Շապուհն ի հայտ է գալիս բնավորության նորանոր գծերով: Լինելով խորաթափանց ու խելացի մարդ (այդ հաստատում է Բուզանդը) Շապուհն անմիջապես գլխի է ընկնում Արշակի Պարսից աշխարհից ծողոպրելու մոտավոր պատճառը: Նա պատգամախոսներ է ուղարկում հայոց թագավորի մոտ խնդրելով նրանվերադառնալ և միասին գտնել չար դիտավորության մեղավորներին: Փախուստից հետո Շապուհի ընդունած դիրքորոշումը, գործողությունները խոսում են վերջինիս դիվանագետ լինելու մասին: Նա գիտի, թե որ պահին ինչ է հարկավոր իրեն և ինչ պետք է անի: Ութը տարի լռելուց, խաղաղության ու հաշտության կոչ անելուց հետո, ամրապնդելով իր հարաբերությունները հույների հետ, Շապուհը պատերազմ է սկսում Հայոց աշխարհի դեմ: Քաղաքական շահերին զուգընթաց Շապուհը զարմանալի սեր և համակրանք է տածում հայոց Արշակ II թագավորի նկատմամբ: Վհուկներին, քավդեաներին ուղղված խոսք - խոստովանությունում պարզորոշ երևում է պարսից արքայի անթաքույց ուշադրությունն ու հարգանքը , և անուղղակիորեն տրվում է նրա և Արշակի բնութագիրը. «Եթէ ես բազում անգամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց, և նա համակ անարգեաց զիս: Եւ եդի ընդ նմա ուխտ խաղաղութեան, և երդուաւ ինձ յիւրեանց օրէնս քրիստոնէութեանն 'ի գլխաւորութիւն այնմ, զոր աւետարանն կոչեն : Նախ այն երդմանն ստեաց: Ես նմա բեւր բարիս խորհեցայ այ որպէս հայր որդւոյ կատարել նմա, և նա ինձ չար ընդ բարւոյ հատոյց: Բայց թէ գիտէի՝ թէ յայսմ հետէ կայցէ յուխտին իմում և ի՝ հնազանդութեան բարեաւ ուխտիւ, մեծապես մեծարանօք արձակէի զնա խաղաղութեամբ յիւր աշխարհն»[3]:

Մինչև վերջին պահը Շապուհը փորձում է Արշակին համոզելու համար ինքն իրեն , որ պատժելու իր որոշումը ճիշտ է և անխուսափելի:

---

[3] Նույն տեղում, էջ 254, 256:

Այս կերպարին Բուզանդը կերտում է դրական և բացասական գծերով՝ թույլ տալով վերջինիս զարգանալ ու դրսևորվել ինքնուրույն, առանց հեղինակային միջամտության: Խորենացու մոտ Շապուհը ներկայացվում է գործողությունների, արտաքին քաղաքական հարաբերությունների, նամակ - գրությունների, երկխոսությունների ընթացքում: Սակայն կերտված է միակողմանիորեն ,սոսկ որպես բռնակալ, հզոր պետության միահեծան արքա, որը այլ ազգերին նայում է վերևից ու ամեն կերպ ձգտում ենթարկել ու ծառայեցնել նրանց իր շահերին: Հայերին ևս նայում ու վերաբերվում է տիրոջ, կարգադրողի, իշխողի իրավունքով՝ նրա մեջ տեսնելով միայն վասալի: Խորենացին անտեսում է այս կերպարի զուտ անհատական ու հոգեբանական գծերը՝ ցուցադրելով նրան սոսկ որպես այլազգի ինքնակալի (սա, իհարկե, հեղինակային սկզբունք է. Խորենացին պարսկական որևէ բան արժանի չի համարում խոր ուսումնասիրման և ուշադրության):

Պարսից բազմաթիվ արքաներից առանձնանում է նաև Հազկերտը, որը Եղիշեի և Փարպեցու մոտ միանշանակորեն կերտված է որպես բացասական կերպար: Եղիշեն այս հերոսի մեջ խտացնում է ամենաբացասական գծերը՝ հիպերբոլիկ պատկերներով ներկայացնելով սատանայի գործակից դարձած նրա էությունը: Ծայրահեղության հասնող չափազանցությունը և պատմիչի ատելությունը բխում է Հազկերտի՝ քրիստոնեության նկատմամբ ունեցած անհանդուրժող ու անմարդկային վերաբերմունքից: Այս արքան Եղիշեի գրչի տակ հանդես է գալիս որպես հոգեկան հավասարակշռությունից զուրկ, հիվանդոտ, կիսախելագար մի մարդ, որը հոգու չարությանը հագուրդ տալու համար ավերում, այրում, սպանում է և կուտակված ողջ թույնն ու մաղձը թափում ամենքի վրա: Եղիշեն պատկերավոր փիլիսոփայությամբ է բնութագրում Հազկերտի էությունը. «Եգիտ սատանայ իւր գործակից, և զամենայն մթերեալ թոյնսն թափեաց ի բաց, և ելից զնա իբրև զպատկանդարան դեղեալ նետիւք: Եւ սկսաւ եղջեւր ածել անօրէնությամբ, գոռոզանայր, և գոռալով հողմն հանէր ընդ չորս կողմանս երկրի...»[4]:

---

[4] Եղիշե , Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 12:

Նշված և բազմաթիվ այլ հատվածներում ուրվագծվում է Հազկերտի դիմանկարը, որը կարճամիտ ու տխմար լինելով, իրեն համարում է անմահ ու ամենազոր: Ու բնական է, որ իրեն աստված համարող մարդը ցանկություն ունենա գրավել ու իշխել բոլորին ոչ միայն ֆիզիկապես, այլ նաև հոգեպես:

Եղիշեն, հեղինակային բնորոշումներից հետո պատմում է նրա գործերի ու ձեռնարկումների մասին: Հազկերտի կերպարը սկսում է զարգանալ արդեն նրա կայացրած անմիտ վճիռների, դրանց հաջորդող գործողությունների շղթայում :

Փորձելով կյանքի կոչել Հայոց աշխարհից քրիստոնեությունը վերացնելու գաղափարը Հազկերտը դիմում է լսված ու չլսված քայլերի. կաշառում, խաբում, մոլորեցնում, պատվում, շողոքորթում, սպառնում, սպանում է բազմաթիվ հայերի, իրեն համապատասխան գործակիցների միջոցով աշխարհագիր անում ողջ հայոց երկիրը: Նրա ձեռնարկումները թույլ են տալիս բացահայտվելու նորանոր գծերով: Եղիշեն այս կերպարին անհատականացնելու, չափազանցության ծայրահեղ աստիճանն մեղմելու նպատակով, ստեղծում է Հազկերտի հոգեբանական բեկման մի փոքր պատկեր. նենգաբարո արքան մի պահ հանդարտվում ու խոնարհվում է (հայերի տարած հաղթանակի լուրը պարսիկ բանագնացից լսելուց հետո), զղջում ու հասկանում է իր արածների անմտությունն ու չարությունը, խստովանում է իր տկարությունը և հրովարտակ ուղարկում ամենուր հրամայելով հաստատուն մնալ քրիստոնեության մեջ: Այս բեկման պահի ներմուծումը արտաքուստ անհամոզիչ, սակայն ներքուստ տրամաբանական զարգացում է: Հոխորտացող ու գոռոզամիտ արքան, որ իրականում իր մոգերի, բարձրաստիճան պաշտոնյաների, հազարապետի հլու կամակատարն է «օբյեկտիվ» պարտությունից հետո ակամա սկսում է մտածել «սուբյեկտիվորեն» ու փնտրել գտնել իր ամոթալի անկման պատճառը: Զղջմանը հաջորդած պատկերը դարձյալ համոզիչ է, որովհետև նմանատիպ բնավորությունները չեն կարող երկար մնալ իրենց համար անբնական վիճակում (զղջման): Հազկերտի հեղհեղուկ ու փոփոխական էությանը ծանոթ հայերը նրա ուղարկած հավատարմագրին վերաբերում են թերահավատորեն և այստեղից էլ Հազկերտի բնութագիրը. «Իսկ հաւատասցու՞ք անհաստատ

հրամանի նորա. զո՞ր բարեգործութիւն տեսաք առ ամենայն եկեղեցիս. որ են յաշխարհին Պարսից : Զի որ ինքն իբր չար է այլում բարի ոչ կարէ լինել. և որ ինքն ընդ խաւար գնայ, այլում ոչ առաջնորդէ ճշմարտութեան լուսով»[5]: Հազկերտին բնութագրելու համար Եղիշեն օգտագործում է համեմատությունների, գեղարվեստական պատկերների մի ողջ շտեմարան՝ առավել ընդգծելու նրա խավարածին, տգետ ու անմարդկային էությունը: Հազկերտը չար դևի պես «ոչ դադարէր յուզել և շարժել զբուք ծմերանւոյ:

Որպէս և նմանեալ իսկ էր ծովածուփ, ալէկոծ խռովութեան , ոչ դուզնաքեայ վեր ի վերոյ, այլ անդստին, յանդնդոց բարձրանայր, փրփրեալ, կուտակեալ, վիշապածայն որոտալով, գազանաբար գոչելով առհասարակ դողացուցանէր զտիեզերական զիւր իշխանութիւնն»[6]:

Եղիշեի գրչի տակ Հազկերտն իր բնութագրումներով դառնում է տիպական կերպար, որը մարմնավորում է բոլոր նվաճողական քաղաքականություն վարող բռնակալների էությունը :

Ի տարբերություն Եղիշեի՝ Փարպեցին Հազկերտին ներկայացնում է առավել բնական գույներով: Նա հավանություն է տալիս իր չարախորհուրդ հազարապետ Միհրներսեհի խոսքերին և որոշում է « բարերարություն » անել ու « փրկել» իրեն շրջապատող փոքր ազգերի հոգիները:

Փարպեցու մոտ Հազկերտն ավելի պասսիվ կերպար է, քան նրա հազարապետը՝ Միհրներսեհը: Վերջինս իր բնույթով նման է Եղիշեի Հազկերտին: Իսկ Փարպեցու կերտած արքան , ճիշտ է, խորամանկ է, գոռոզ, դաժան, ինքնուրույն վճիռներ կայացնելու անընդունակ, սակայն ավելի հանդարտ է , առաջնորդվում է ոչ թե հոգու թույնով, այլ որոշակի նպատակով (փորձում է «փրկել» մարդկանց հոգիները), ի վիճակի է ցավել իր քաջարի զինվորների մահվան համար, նույնիսկ ափսոսալ թշնամի բանակի զորագլուխ Վարդան Մամիկոնյանի մահը՝ «յիշելով զքաջութիւն առնն և զլավութիւնն՝ զոր արարեալ ընդ թշնամիս բազում անգամ ի վերայ աշխարհին Արեաց եցոյց»[7]:

---

[5] Նույն տեղում , էջ 174:
[6] Նույն տեղում , էջ
[7] Ղազար Փարպեցի , Հայոց պատմություն, Երևան , 1982, էջ 172:

Փարպեցին Հազկերտին ներկայացնում է իր խոսքի , արտահայտած մտքերի, շրջապատի հետ առնչությունների միջոցով. նա հանդես է գալիս որպես նվաճող թագավոր զերծ ծայրահեղ որակումներից :

Իր էությամբ նախորդներին նման է Հազկերտի կրտսեր որդին Պերոզը: Իշխանության գալու նրա ջանքերը պսակվում են հաղթանակով. սպանում է իր ավագ եղբորը ու թագավորում: Նրա այսօրինակ մուտքը քաղաքական դաշտ արդեն խոսում է այն մասին, որ Պերոզն իր նպատակին հասնելու համար չի ճանաչում ոչ մի սրբություն: Նա իր նախնիների համեմատ դիվանագիտորեն խելացի է. իշխանության գալուն պես ազատում է կալանված հայոց նախարարներին, նրանց ռոճիկ նշանակում ու պահում իր ծառայության, ենթակայության ներքո: Գյուտ - Պերոզ փոխհարաբերության ընթացքում վերջինս կարողանում է տիրապետել իրեն , զսպել զայրույթը և ազատ թողնել Գյուտ կաթողիկոսին այդ ավելի մեծ պատիժ համարելով վերջինիս համար : Պերոզը իրավացի լուծում է տալիս Վահան – Վրիվ հակասությանը արդարացնելով հանիրավի զրպարտված Վահան Մամիկոնյանին:

Այսուհանդերձ, Պերոզը ևս սովորական նվաճող - բռնակալ է, որը անընդմեջ պատերազմներ է մղում փոքր ազգերի դեմ ու փորձում իր իշխանությունը տարածել ամենուրեք:

Փարպեցու Պատմության մեջ Պերոզը հանդես է գալիս մեկ-երկու դրվագներում: Նրա բնութագիրը հիմնականում տրվում է օժանդակ և գլխավոր կերպարների բերանով: Պարսկաստանից եկած դեսպանը Շապուհին պատմում է իրենց թագավորի հեփթաղների դեմ մղած կռվի մասին, որից պարզվում է, որ Պերոզը երդմնազանց լինելով, գոռոզամտությամբ ու անզգամությամբ, առանց որևէ մեկի հետ խորհրդակցելու որոշել ու հարձակվել է Հեփթաղի վրա դառնալով բազմաթիվ անմեղ մարդկանց և իր իսկ անձի մահվան պատճառ: «... որում ոք այնչափ վնասուց և բեկման չէ պատճառ բայց ինքն աստուածանման տէրն Արեաց Պերոզ. և իբրև ոչինչ առն ծառայի զաստուածոց ասել վատ ինչ մահ է և կորուստ: Եւ առ անզգացութեան սրտին ոչ իմանայր, թէ դիակամբ ծառայից

իւրոյ լնլոց է զփոսն, զոր փորեաց ի կորուստ անձին իւրոյ և ամենայն Արեաց աշխարհին»[8]:

Միհրանյան Շապուհի, Նիխորի, Վահան Մամիկոնյանի, պարսից Վաղարշ թագավորի , Հազարավուխտի խոսքերում Պերոզը բացահայտվում է նորանոր գծերով :

Ըստ Հազարավուխտի Պերոզը «բուռն և անձնական և անհաւան, և բազումք յարհամարհոտ նորա կամակորութենէն փախուցեալք են յԱրեաց թագաւորութենէ, որք շատ և ոչ սակաւ մասամբ վնասեցին Արեաց աշխարհին»[9]:

Պերոզի կամակոր ու մեծամիտ կերպարին հակադրվում է եղբայրը՝ Վաղարշը, որը մի «քաղցր» ու «աշխարհաշեն» մարդ էր : Նրան սիրում ու գնահատում էին պարսիկ մեծամեծները, ուստի Պերոզի մահից հետո, նրան են սիրահոժար նստեցնում թագավորական գահին :

Վաղարշը, աչքի առաջ ունենալով եղբոր անմիտ գործերը և դրա տված արդյունքները, խորհրդակցում է ավագանու հետ, ծանր ու թեթև անում, կշռադատում ստեղծված իրավիճակը և արդարացի որոշումներ կայացնում: Փարպեցու վերաբերմունքն այս արքայի նկատմամբ բարյացակամ է, որը բխում է վերջինիս՝ քրիստոնեության նկատմամբ զիջողական վերաբերմունքից:

Վաղարշի ընդունած որոշումներից եզրահանգում ենք, որ պարսից նորընծա թագավորը խելացի , բանիմաց, քաղաքական շահը հասկացող, դիմացինի արժանիքները գնահատող մարդ է: Նա հիմնականում ներկայացվում է արքունական ժողովներում, որտեղ բարձրաստիճան պաշտոնյաների ու նաև Վահան Մամիկոնյանի հետ քննում է օրհասական խնդիրներ և կայացնում վճիռներ:

Պատմագրության մեջ հանդես են գալիս նաև այլ օտարազգի թագավորներ, որոնք, սակայն, չեն ներկայացվում որպես լիարժեք կերպարներ:Թեև այս կամ այն թագավորի մասին պատմիչներն արտահայտում են որոշակի վերաբերմունք, կարծիք, սակայն դա բավարար

---

[8] Նույն տեղում , էջ 376, 378:
[9] Նույն տեղում , էջ 382:

չէ կերպարն ավարտված համարելու: Այսպես գրեթե բոլոր պատմիչները հիշատակում են հույն Կոստանդիանոս կայսեր անունը, նշելով, որ նա աստվածավախ, խաղաղասեր քրիստոնյա է:

«Որ ինքն 'ի մէջ կացեալ, 'ի ծեռն Հոգւոյն սրբոյ յայտնէր զխոնարհութիւն կրօնազգեաց աստուածասիրութեան նշանակ թագաւորին Կոստանդիանոսի և զննեալ առաջի ամենեցում ցուցանէր, զի 'ի ներքոյ ընդ ծիրանեօքն քուրձ զգեցեալ էր առ սէր ջերմեռանդ հաւատոցն որ առ Քրիստոս ունէր»[10]:

Թեև թերավարտ, սակայն Կոստանդիանոսից ավելի շարժուն կերպար է Թեոդոս կայսրը, որի անունը պատմիչները հիշատակում են մեծագույն հարգանքով ու սիրով: Բարյացակամությունը նախ և առաջ բխում է, ինչպես արդեն նշել ենք, բուն կերպարի վերաբերմունքից: Որքան թագավորը օգնում, աջակցում, նպաստում է հայոց երկրում խաղաղության պահպանմանը, այնքան նրան բարձր գնահատելու չափանիշը մեծանում է: Առավելապես, եթե այդ արքան հոգ է տանում քրիստոնեական կրոնի ամրապնդման համար, ապա միանշանակ ներկայացվում է որպես դրական կերպար (թեև անավարտ): Եվ բնական է, որ այս չափանիշներով առաջնորդվող պատմիչները անհանդուրժող են հունաց Վաղես կայսեր նկատմամբ : Վերջինս հավատքի մեջ մոլորվելով, ընկնում է արիանոսների աղանդի ազդեցության տակ և սկսում է գործել, ինչպես անհավատ հերետիկոս: Բուզանդը այս հերոսին կանգնեցնում է ճշմարիտ հավատացյալներին դեմ հանդիման, սակայն սխալ դավանանքը թույլ չի տալիս Վաղեսին տեսնել ճշմարիտ լույսը: Նա իր որդու մահվան մեջ մեղադրում է Ներսես Մեծին ու անարգաբար աքսորում նրան թողնելով առանց հացի ու ջրի:

Վաղեսը ներկայացվում ու բնութագրվում է կրոնի տեսանկյունից և նրա գործողություններն էլ բխում են իր անհավատ էությունից: Այսինքն ինչպիսին մարդն է, նրա էությունը , այնպիսին էլ նրա կատարած գործերն են :

---

[10] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Երևան, 1987, էջ 42:

Այսպիսով, օտարազգի այն թագավորները, որոնք որոշակի դեր են խաղացել տվյալ ժամանակաշրջանի հայոց պատմության մեջ և ուղղակի կամ անուղղակի կերպով ազդել են հայ ժողովրդի ներքին ու արտաքին կյանքի վրա, չէին կարող անտեսվել պատմիչների կողմից:

Մատենագիրները օտարազգի թագավորների կերպարների հոգեբանությունն ու անհատական հատկանիշները բացահայտելու համար օգտագործում են կերպավորման մի շարք սկզբունքներ՝ երկխոսություն, հեղինակային ուղղակի գնահատական, մարդկային փոխհարաբերություններ, օժանդակ կերպարների կողմից տրվող բնութագրումներ, գործողությունների ու արարքների ցուցադրում և այլն :